Հաստատված է
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ Վարչության
20.12.2016թ.
թիվ 242103 որոշմամբ
Վարչության նախագահ

---------- Ա. Գալստյան

Հրապարակման ամսաթիվը թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասների համար՝
Հեռախոս- (37410)8686, (37410)51-09-10 (9105)-Բանկի տեղեկատու

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ 2016

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ն հաճախորդներին մատուցում է ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների հետևյալ տեսակները.

1. Ներդրումային ծառայությունների մատուցում

1.1. Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
1.2. Բանկի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
1.3. Բանկի հաշվին և Բանկի անունից արժեթղթերով գործարքների կատարում:

2. **Ոչ հիմնական ծառայությունների մատուցում**

2.1. Արժեթղթերի պահառություն

Ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցող ստորաբաժանում է համարվում Բանկի "Դիլինգ Կենտրոն" վարչությունը: Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները մատուցվում են "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ -ի և հաճախորդի միջև կնքված **Ներդրումային ծառայությունների մատուցման և/կամ Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցման պայմանագրերի** պայմաններին համաձայն:

Ծառայությունների մատուցման հայտերը կազմվում են հայերեն լեզվով, և կարող են ընդունվել ինչպես թղթային ձևով, այնպես էլ՝ էլեկտրոնային եղանակով՝ CBANet միջբանկային ցանցի միջոցով:
Հաճախորդին տրամադրվում են հաշվետվություններ կատարված գործառնությունների վերաբերյալ, նաև տեղեկանք դեպո հաշվի վերաբերյալ գործարքը կատարելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը: Հաշվետվություններն ու տեղեկանքները տրամադրվում են թղթային կամ էլեկտրոնային ձևով՝ պայմանագրում նշված եղանակով:

Ծառայությունների մատուցման համար հաճախորդից գանձվում են միջնորդավճարներ՝ համաձայն "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ում գործող սակագների:
Բանկի և հաճախորդի միջև տեղեկատվությունը փոխանցվում է **տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցներով:**

Գործարքի կնքման վայր կարող է լինել ինչպես բորսայական, այնպես էլ՝ արտաբորսայական շուկան:

Արժեթղթերում ներդրումներ կատարելով՝ ներդրողներն առնչվում են մի շարք ռիսկերի հետ, որոնք տարբեր տարբեր տեսակի արժեթղթերի համար տարբեր են:

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ն արժեթղթերի շուկայում գործարքներ կատարում է պետական և կորպորատիվ պարտատոմսերով, ու թեև պարտատոմսերը դասվում են զգալիորեն ցածր ռիսկայնություն ունեցող գործիքների թվին, ֆինանսական շուկայի մյուս գործիքների նման պարունակում է իրեն բնորոշ հիմնական ռիսկեր, որոնք են՝

- Շուկայական ռիսկ
- Վարկային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Այլ ռիսկեր

Որպես հնարավոր ռիսկի տեսակներ առանձնացնենք հետևյալները.

Տոկոսադրույքի ռիսկը շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխության հետևանքով առաջացող ռիսկն է: *Գնաճային ռիսկը* գնաճային ճնշման ազդեցության հետևանքով առաջացող ռիսկն է, որի արդյունքում արժեթղթերում ներդրումներից ստացված եկամտի գնողունակությունն ընկնում է: *Վարկային ռիսկն* այն ռիսկն է, որը կարող է առաջանալ արժեթուղթ թողակող անձի կողմից պարտավորությունները լրիվ կամ մասնակի չկատարելու հետևանքով:

Ռիսկի այս տեսակները այն հիմնական ռիսկերն են, որոնք կարող են առաջանալ արժեթղթերում ներդրումներ կատարելիս: Հնարավոր այլ ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ:

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ն չի ապահովագրում ներդրողին շուկայում գների անբարենպաստ տատանումներից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ հաճախորդի կողմից ներկայացված հայտերի պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված **ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԸ: "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ն ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ** հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ի կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:

Արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները մատուցվում են համաձայն "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԻ , որտեղ ներառված են սպառողի կողմից վճարումներ կատարելու պայմանները, եղանակներն ու ժամկետները, կնքված պայմանագրերի դադարեցման դեպքում սպառողի միջոցների վերադարձման կարգը:

Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները մատուցվում են՝ համաձայն **"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ում գործող սակագների և դրույքաչափերի:**

Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցներ են՝

CBANet. DealingCenterArmEconomBank/ArmEconom/CBANet,
*E-mail.**dealing@aeb.am***
Հեռ. +(374 10)51 09 09
Ֆաքս. +(374 10)56 36 97

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Լրիվ անվանումը՝ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ>> բաց բաժնետիրական ընկերություն
Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1
Հեռ՝ (374-10)510910, Ֆաքս՝ (374-10)538904,
Էլ. հասցե՝ bank@aeb.am,
Պետական գրանցումը՝ 26 օգոստոսի 91թ., գրանցման համարը՝ 0156,
Լիցենզիա՝Բանկայիյն գործունեության լիցենզիա թիվ 1,
Լիցենզիան տրամադրվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6,
Հեռ՝ (374-10) 583841,Ֆաքս՝ (374-10)523852,
Էլ հասցե՝mcba@cba.am